ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ԿԱՊԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼԻ ՖԻԼԻՊԻՆՆԵՐԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

- **ԱՆՈՒՆԸ, ԱԶԳԱՆՈՒՆԸ**

Բագրատ Բադալյան,

- **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի տեղակալ,

- **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**

Ֆիլիպինների Հանրապետություն, քաղաք Մանիլա, 2018թ. սեպտեմբերի 11-15-ը:

- **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԵՐԸ**

Ասիական զարգացման բանկ:

- **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**

Մասնակցություն Ասիական զարգացման բանկի 6-րդ տրանսպորտային ֆորումին:

- **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐ**

2018թ. սեպտեմբերի 12-14-ը ք. Մանիլայում կայացավ Ասիական զարգացման բանկի 6-րդ տրանսպորտային ֆորումը, որի ընթացքում Հայաստանի Հանրապետությունը ներկայացրեց տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի տեղակալ Բագրատ Բադալյանը:

Տրանսպորտային ֆորումն իր շուրջ հավաքեց Ասիական զարգացման բանկի մի շարք աշխատակիցների, ֆինանսական կառույցների, միջազգային կազմակերպությունների և տարբեր երկրների տրանսպորտի բնագավառի ներկայացուցիչների:

Միջոցառման նպատակն էր խթանել Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի տրանսպորտային բնագավառի կայուն և արդյունավետ զարգացումը:

Համաժողովի շրջանակներում անցկացվեցին մի շարք տեխնիկական և նեղ մասնագիտական քննարկումներ ճանապարհային անվտանգություն, ճանապարհային ակտիվների կառավարում, էլեկտրոնային կառավարում և շարժունակություն, նորարարական տեխնոլոգիաներ, կայուն քաղաքային տրանսպորտի զարգացում, տարածաշրջանային կապակցվածություն, կլիմայի փոփոխություններ և տրանսպորտի վրա դրա ազդեցությունը, երկաթուղային տրանսպորտի զարգացումը և այլ թեմաներով:

Մասնակից երկրների ներկայացուցիչները փորձի փոխանակում ունենալու հնարավորություն ունեցան, ներկայացրեցին տրանսպորտային ենթակառուցվածքների բնագավառում իրենց երկրներում իրականացվող և իրականացվելիք ծրագրերը և նախագծերը:

Միջոցառման ընթացքում մասնակիցների կողմից ներկայացվեցին նաև մի շարք շնորհանդեսներ իրենց երկրներում արդիական տրանսպորտային ենթակառուցվածքների ծրագրերի, բնագավառում առկա խնդիրների և դրանց ուղղված հնարավոր լուծումների վերաբերյալ:

Քննարկվեցին նաև քաղաքային տրանսպորտի բարելավման, սահմանային անցակետերի արդիականացման, ճանապարհների անցանելիության բարելավման և մի շարք այլ հարցեր:

- **ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ**

Հիմնական քննարկումներից դուրս նախարարի տեղակալը հանդիպումներ ունեցավ նաև Ասիական զարգացման բանկի (ԱԶԲ) գործադիր տնօրեն Սյուրկանի Իշաք Քասիմի, ԱԶԲ Կենտրոնական և Արևմտյան Ասիայի տարածաշրջանի տրանսպորտի և կապի բաժնի

գլխավոր տնօրենի տեղակալ Հոնգ Վեյի, ԱԶԲ Կենտրոնական և Արևմտյան Ասիայի տարածաշրջանի վարչության տրանսպորտի և կապի բաժնի տնօրեն Դոնգ-Սու Պյուի և ԱԶԲ Կենտրոնական և Արևմտյան Ասիայի տարածաշրջանի վարչության տրանսպորտի և կապի բաժնի նախագծի ղեկավար Նարինդրա Սինգրուի հետ: Հանդիպումների ընթացքում քննարկվեցին՝

1. Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի ֆինանսավորման շրջանակային համաձայնագրի (MFF) երկարաձգման հնարավորությունը, որի գործողության ժամկետը լրանում է 2019թ. սեպտեմբերին: Չնայած որ նախկինում նշվում էր վերջինիս երկարաձգման անհնարինությունը՝ այնուամենայնիվ քննարկումների արդյունքում բանավոր համաձայնություն ձեռք բերվեց՝ շինարարական աշխատանքների առաջընթացի դեպքում, ֆինանսավորման շրջանակային համաձայնագիրը բացառության կարգով երկարաձգելու վերաբերյալ:
2. Ասիական զարգացման բանկի կողմից տրանսպորտի և ենթակառուցվածքների ռազմավարության մշակման համար տեխնիկական աջակցության տրամադրման հարցը:
3. Տարածաշրջանային ինտեգրումը խթանելու նպատակով՝ ՄԱԿ-ի աջակցությամբ «Տարածաշրջանային ինտեգրում» խորագրով անցկացվելիք միջոցառմանը ԱԶԲ-ի կողմից աջակցության հնարավորությունը՝ Հայաստանի, Ռուսաստանի, Վրաստանի և Իրանի ներկայացուցիչների մասնակցությամբ: Հանդիպումը թույլ կտա նաև քննարկելու Հայաստանը Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային տնտեսական համագործակցության ծրագրին (CAREC) կապելու հնարավորությունը, ինչը շատ կարևոր է Հայաստանում տրանսպորտային ենթակառուցվածքների զարգացման տեսանկյունից:

♦ **ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Բագրատ Բաղալյան
18.09.2018թ.